

7934



ՀԱՄԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիդյան

«17» 07 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N° 129 - 24

Նախաձեռնող՝

«Ակվա-Լեն շին» ՍՊԸ  
Երևան, Աջափնյակ Լենինգրադյան 23/11

Գործունեությունը՝

Ձովունի վարչական շրջանի 41-րդ փողոցի 1-ին նրբանցքի 5/2 հասցեում նախատեսվող բազմաբնակարան շենքի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեպլություն  
Նաիրի խոշորացված համայնք

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 129 - 24

«17» հուլիսի 2024թ.

**Ջովունի վարչական շրջանի 41-րդ փողոցի 1-ին նրբանցքի 5/2 հասցեում նախատեսվող բազմաբնակարան շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝ «Ակվա-Լեն շին» ՍՊԸ  
Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն  
Տեղադրման վայրը՝ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի, Ջովունի վարչական շրջան

**Ներածական մաս.** «Ակվա-Լեն շին» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Ջովունի վարչական շրջան 41-րդ փողոց 1-ին նրբանցք 5/2 հասցեում կառուցել ժամանակակից բազմաբնակարան շենք:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի՝ 4-րդ մասի 8-րդ կետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N14082023-07-0024, /ծածկագիրը՝ C2M4P4JIQJGE/, 06.09 2023թ-ին տրված NCPP0-0000-8309 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Համաձայն ինժեներատեխնիկական ուսումնասիրությունների եզրակացության՝ տեղամասում մինչև 38 մետր խորությամբ ստորերկրյա գրունտային ջրեր չեն հայտնաբերվել: Ֆիզիկատեխնիկական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներատեխնիկական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Ռեյտինգի բացարձակ նիշերը տատանվում են 1189-1192 մետրի սահմաններում:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող բազմաբնակարան շենքի հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 3385,7 քմ, որի բնակելի հատվածը բաղկացած է սեկցիաներից՝ յուրաքանչյուրն առանձին մուտքով:





Նախատեսված է կառույցի հարկայնությունը վերգետնյա հատվածում 20 հարկ, ստորգետնյա հարկ՝ -6.90 և 3.60 նիշերով՝ ավտոկայանատեղի, որտեղ նախատեսվում է իրականացնել նաև քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ապահովումը: Ստորգետնյա ավտոկայանատեղի մուտքը կկազմակերպվի 41-րդ փողոցի կողմից: Վերգետնյա 1-ին հարկը (0.00 նիշով) կտրամադրվի սպասարկման տարածքներից, որոնց մուտքերը կազմակերպված կլինեն առանձին՝ 41-րդ փողոցի կողմից: Այս հարկից կկազմակերպվի նաև բնակելի հատվածի մուտքերը բակի կողմից: 41-րդ փողոցից դեպի բակ բնակիչների անցումը կազմակերպված կլինի շենքին կից մայթերով: Ստորգետնյա ավտոկանգառից ելքերը կլինեն շենքը սպասարկող սանդղավանդակներով և վերելակներով: Բնակարանները նախատեսվում են սկսած վերգետնյա 2-րդ հարկից: Բնակելի հատվածը բաղկացած է 2 սեկցիաներից՝ յուրաքանչյուրն առանձին մուտքով: Յուրաքանչյուր սեկցիայի բոլոր հարկերում մուտքային հանգույցում նախատեսված է նախասրահ, սանդղավանդակ, վերելակային նախասրահ (2 վերելակով):

Նախատեսվող բազմաբնակարան շենքի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- Հողի ընդհանուր մակերես՝ 3385.7 քմ,
- Կառուցապատման մակերես՝ 1052.3 քմ,
- Կանաչապատման մակերես՝ 1354.5 քմ,
- Ճանապարհ, մայթ՝ 978.9 քմ,
- Ստորգետնյա I հարկի մակերեսը՝ 1565.8 քմ,
- Ստորգետնյա II հարկի մակերեսը՝ 1290.4 քմ,
- Ավտոկայանատեղերի քանակ՝ 66 հատ,
- Բնակարանների քանակ՝ 254 հատ:

Չրոյական նիշում նախատեսվող կանաչապատ մակերեսը կկազմի՝ 1354,5 քմ, ներքին ոռոգման ցանցը նախատեսվում է կաթիլային:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է: Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան: Ծառաթուփային բուսականությունը բացակայում է: Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակույթային հուշարձաններ, քանի որ գործունեության ենթակա տարածքը գտնվում է կառուցապատված միջավայրում: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կառուցապատումից հետո տարածքում կստեղծվի կանաչ գոտի, որի համար կբերվի բուսահող: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտնկվեն ծառեր և թփեր: Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Նախատեսվող գործունեությունն իրենից կներկայացնի ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Բազմաբնակարան շենքի օդափոխությունը նախատեսված է բնական՝ օդատարերով, որոնք բարձրանում են տանիք: Օդատարերի վրա յուրաքանչյուր հարկի առաստաղի տակ նախատեսված է կարգավորիչ ճաղավանդակ:

Բնակարաններում տեղային օդափոխիչների տեղադրումը նախատեսված է պատռք:





գամբերի տարածքում: Սանդղավանդակներում նախատեսված են հակահրդեհային հինքնափակվող դռներ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ բնակելի և հասարակական տարածքներում նախատեսված է բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Տանիքները հարթ են, իրականացվելու են անմիջապես վերին մակարդակի ծածկասալերի վրա:

Շինարարության ընթացքում կիրականացի միջոցառումներ՝ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից և վտանգավոր արտանետումներից:

Հետիոտների անվտանգությունն ապահովվելու նպատակով շինհրապարակը կցանկապատվի թիթեղով:

Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով՝ մատակարարումը կկազմակերպվի բացառելով բետոնաջրերի արտահոսքը և բետոնաջրերով աղտոտումը շրջակա միջավայր: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Բազմաբնակարան շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին, որի ստացման համար սահմանված կարգով փաստաթղթերի փաթեթը ներկայացվել է մատակարար կազմակերպություն: Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Նաիրի համայնքի ոռոգման ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի ստացման համար սահմանված կարգով փաստաթղթերի փաթեթը ներկայացվել է մատակարար կազմակերպություն:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Այն տեխնիկական միջոցները որոնք հնարավոր չէ մոտեցնել սպասարկման կետեր, կսպասարկվեն շինարարական հրապարակում մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 10.5 տոննա, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 2250 տոննա շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական հինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 2600 խմ ծավալով, կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն՝

- փորման բեռնման աշխատանքների,





- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսվել են հետևյալ միջոցառումները՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով, սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխի փոշու տարածումը:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները՝

- ջրցանի ծավալների այնպիսի հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և ջուրը կբավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են՝

- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով՝ տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում, ժամանակակից տեխնիկական միջոցների ներգրավում,
- աշխատանքների ավարտից հետո բոլոր տարածքների մաքրում, առաջացած թափոնների տեղափոխում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ բուսահողի լիցք մոտ 130 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Նաիրիի քաղաքապետարանի հետ:
- կանաչապատ տարածքների ոռոգման աշխատանքների իրականացում հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Համաձայն հայտի՝ նախատեսվում է նաև արտակարգ իրավիճակների, կենսաբազմազանության պահպանության, աղմուկի և թրթռման ազդեցությունների բնապահպանական միջոցառումներ, որոնք տրված են հայտի համապատասխան բաժիններում:

Բազմաբնակարան շենքի շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝





- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ;
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ և այլն:

Մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսվում է 2620000 ՀՀ դրամ:


**Պարճառարանական մաս.** ՀՀ օրենսդրությանը համապատասխան հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Ջովունի վարչական շրջանում: Փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Ջովունի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

2. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:

3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ





օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հասկացված վայր:

4. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառափային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:

5. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:

## ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Ակվա-Լեն շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի վարչական շրջան 41-րդ փողոց 1-ին նրբանցք 5/2 հասցեում նախատեսվող բազմաբնակարան շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշտավության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
գլխավոր մասնագետ՝



Հովակիմ Ֆրունզիկյան